

ից շափ մը գործոց բարեկարգութեան, բայց հարկ չի կայ որ ասի. կայ մետաղ մը կամ ուրիշ որ և իցէ բան մը լինի որ ըստ ինքեան արժէք մ'ոնենայ, այլ բաւական է որ պայմանադրեալ որ և իցէ նիւթ մը լինի, ինչպէս է հիմա ընդունակութեան և տարածոցի և ծանրութեան տասնորդական չափոց դրուժիւնը, Սակայն եթէ ուղենանք քննել թէ ինչ պէտք է լինի այս պայմանադրեալ իրը, խօսքերնիս շատ կ'երկըննայ, առ որ պէտք է նախ և առաջ տղէտ մը քննել հետազոտել քաղաքական անտեսութիւնը ամենայն պարագայիք հանդերձ, զոր կը թողունք ընել և խորհրդածութեան առնուլ իմաստնագունից:

ՅՈՎԱԿԱԿ ՏԱ - Ա.ՄԻԶԻՄ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԷՀ

(Տիս յէջ 48)

ԾՆՈՂՔ

ԱՍՏՈՒԾԱԲԻՆ և մարդկային օրինաք ծնողաց աւանդեալ է իրենց զաւակաց խնամքն ու պահպանութիւնն, և ասոր համար կը պարտաւորին անդստին մատաղ հասակէն զանոնք առաքինութեամբ մնուցանել, բաւական չհամարելով միայն զմարմին զարգացնել, զոր անբան անսառնք ևս իրենց ծննդոց կ'ընեն.

Գլխաւոր փոյթերնէն մէկն ըլլայ պիտի հսկել զաւակաց առողջութեան վրայ, և հեռի բոնել անսնցմէ որ և իցէ մարմոյ անհանգըստութեանց և թերութեանց առիթներն, որք յետոյ կրնան կենօք չափ վրանին տիրապետել: կեանքն արդէն իսկ այնքան տաժանական է և լի թշուառութեամբ, քանի որ գեռ կը ժպտի մարդուս բընըր անձին քաջողվութիւնն ու աշխուժութիւնը, մինչեւ կը ջանայ բընական ախտերով ճանձրութեանց և մեծագոյն վշտաց առջեն առ-

նելու, որը ամէն վայրկեան աղէտք կը ծնանին, և մեծապէս անկա-
ռող կ'ընեն զմեզ աշխատելու և աղտօրէն մեր գործարանները գործ-
ածելու:

Ծնողք պարտին նախահոգակ ինամով հեռի բռնել իրենց որ-
դիներէն աղետալի ապագայ մը, յորում բազմաթիւ թշուառաց
համար նուռազագոյն չարիք համարուած է մահն ջանմք իրենց
ապագայ կազմուածքին յայտարար հիւանդութիւններէն հեռի բռո-
նելու համար, նշան մը տեսնուելուն պէտ, պէտք է ծնողք իսկոյն
փորձ բժիշի մը խորհուոց և առաջնորդութեան զիմեն, 'ի բաց թող-
լով դայեկաց միջամտութիւններն ու նպաստումատոյց մտադրու-
թիւններն, յաճախ այնքան աղիտարերը, որ եթէ հոչակաւոր ա-
ռողջարանի մը խօսքով — « հիւանդ մանկիկն ուրիշ բան չէ թժիշկ
չնղող անձանց համար՝ բայց եթէ կնքուած ծրար մը զոր արտաքինք
և ոչ իսկ բանալ փորձելու յանդունութիւնը կ'ունենան » — երևա-
կայենք թէ ողքա ինչպէս մանկանց ներքին պէտքը կրնան նկատել:

Միշտ մտաց առջև ունենան ծնողք, որ ամենէն զօրաւոր կրթու-
թիւնն առ սրդիս՝ անձնական օրինակն է, որ օգտակարագոյն է և
աղբողագոյն քան զամէն դաս Առաքինութեան ճամրուն մէջ զա-
ւակաց ապահով ընթացք տալու համար՝ պէտք է որ ծնողք քաղ-
ցրութեամբ անոնց սրտերը շահին. հրամայելով անոնց վրայ վստահու-
թիւն ազգել կարելի չէ, այլ ներշնչմամբ: Արդիք պէտք է կրթուին
բարոյականութեամբ, կրօնիք, հայրենասիրութեան ազատ զգաց-
մամբք, այլ ազատութեամբ: որ հիմնեալ առարինութեան վրայ՝ առ
օրէնս յարգութեան մէջ չպակսին. հայրենիքը չի հայհոյեր զԱս-
առուած, չանարգեր զկրօնա:

Բարոյն գործադրութեան մէջ վարժեցրնեն՝ ըսել է որդւոց ամե-
նէն թանկագին ժառանգութիւն մը թողուլ. այսու կարելի է ըսել
որ օգտակար կ'ըլլանք նաև յետ մահու:

Յիրաւիք գեղեցիկ ժառանգութիւն հօր, որ կարող է անկեղծօրէն
յիշեցընել որդւոյն՝ ինչ որ վիրդիիսոս ինէասայ հօրը բերնէն անոր
ըսել կուտայ.

« Որդեակ, ինձմէ առաքինութիւն և ստոյգ աշխատութիւն սոր-
վէ, և յայլոց բարեբախտութիւն ու

Հարք և մարք, տղոց աշքերը դոց են. ջանացէք բանալ զանոնք:
դարձընելով զիրենք առ մեծ լցոն՝ առ սէրն Աստուծոյ, որոյ ցոլ-
մանքն են ընկերական սիրոյն մէջ: Համր է նոցա լեզուն. դուք ա-
ռաջինն եղէք լուծելու և սորվեցընելու կարեկցութեան սիրավիր
խօսքեր իրենց նմանեաց համար, և չօրն հասարակաց օրհնութիւն-
ները ինդրելու: իրենց սրտերը դոց է նման այն ծաղկանց որոց
կեանք կու տայ արշալոյսան. իրենց միտքը կոյս է տակաւին, ինչպէս
մարմար քարի կտոր մը սրուն չէ դպած քանդակող գրիշն... փու-

թացէք գեղեցիկ և անամպ աւուր ճառադայթներ շողացընել այս ծաղկան վրայ, և այս անյարդ մարմարին վրայ գրումել ճշմարտին ու գեղեցկին նախատիպ օրինակները: Ընկերութեան, ապագային համար ձեր բարերար խնամքը պէտք է, 'ի փառս Աստուծոյ, ձեզ մնալով միայն պատասխանատութիւնն: Ծնողք, դաստիարակք, գուք այնպիսի աւանդ մ'ունիք ձեռքերնիդ՝ որ Աւետարանին միջի առակին դրամէն շատ աւելի արժէք ունի, զոր եթէ չի շահնեցընէք՝ յետին վաշխառուէն աւելի յանցաւոր էք, որ մինչդեռ սա գարձոյց աւանդն ամբողջ, զուք զայն ևս ընելու կարող ըրլաք պիտի:

Ամենամենա յարդ և կարեռուրդիւն պէտք է մանկան, կ'ըսէին հիներն. ծնողք ՚ի մասնաւորի պարտին ամէն նկատմունք անենալ առ որդիս, չերեցընելով երրէք նոցա առջն հասարակ իրաց ակնոր. կութիւններ, մանաւանդ փիշ համեստ ու ցած գործերու, որ կրնան անոնց սրտերուն մէջ գէշ տպաւորութիւններ թողու. առաքինու. թիւնն աշաց կը նմանի, որ եթէ վնասակար ու խայթող իրաց վրայ սենեալ կենայ, կը տկարանայ: Մտածենք որ նոցա ապագայն մեր ձեռքն է, եթէ միայն օրինակաւ սորվեցընենք իրենց առաքինու. թեան գործադրութիւնն, որ սովորաբար վարձ մ'ունի, գէթ յին. քեան, մեր խնդմտանաց մէջ, որուն համար ձիուսթի կ'ըսէր ան. դադար.

« Ճեսէք, հուսկ ապա բարի մարդիկ են խորագէտք. ստոյգ ան. խելք՝ անզգամմելո՞ւն են » :

Ճառ կը հանդիպի գժբախտարար ընտանեաց մէջ որ ծնողք ՚ի կրթութիւն իրենց զաւակաց փոխանակ բարի օրինակներ ընծա. յելու, ամէն տեսակ անիծիւք, հայհոյանօք և գայթակցութեամբ՝ ի. րենց որդուց բարոյական կործանումը կը պատրաստեն, շրսենք նաև ֆիզիքական՝ անխնամ երեսի վրայ թողլով և անդութ ծառայու. թեանց ենթարկելով:

կը հանդիպի գարձեալ ոչ քիչ անդամ, որ որդիք, պարտին ի. րենց տկարութիւնն ստանձնել թէ մարմնական կազմութեան ախ. տեր՝ ժառանգական հիւանդութիւններով, և թէ չարարաստիկ կա. ցութեան մը գառնութիւններն՝ որ արդիւնք է ծնողաց զեղիս բարո. յից, մինչդեռ յաճախ ծնողաց լոկ ախտերն յաջողութեամբ կ'անց. նին որդուց, առանց իրենց առաքինութիւններն անոնց սրտին մէջ կենդանանալու:

Քաջածանօթ ըլլալով այս սկզբունքս թէ բարի սովորութեան ծը. նունդ է բարի ասողլութիւնն, պէտք էին մարդիկ ամաշել տեսնե. լով որ աշխարհ այնքան բազմաթիւ հիւանդութիւններէ կը տան. ջուի:

Սովորութիւն ընեն ծնողք իրենց ընտանեկան յարկին մէջ կե. նաց ամէն օրինաւոր հաճողք հայթայթելու. սիրեն թող իրենց զա.

ւակները, այն քաղցր էակներն, որք թէ և պատճառք են կերպ կերպ հոգածութեանց, կ'ընծայեն ևս այնքան սիրալիր սրտի զեղմունկը-ներ։ Հոգ ունենան նոցա առողջութեան վրայ՝ որ յաճախ դիւրաւ կը վնասի, նոցա կրթութեան և դաստիարակութեան։ Մոտադիր ըլ-լան նոցա սրտին մէջ բարի ձկտումներ զարգացընելու, քաղցր և միսիթարական ընեն ըստ կարի նոցա գոյութիւնը. վասն զի եղեռն կը համարուի որ մանուկն, այսինքն է անմեղութիւնն, իր տանջանգք ուրիշին յանցանքը քաւել ատիպուի։

Մանկան ապագայն իր առաջին քայլերէն կախումն ունի. մարդուս վիճակն իր կենաց ընթացից մէջ, և 'ի մասնաւորի ծերութեան մէջ, ընդհանրապէս այն է միշտ՝ ինչ որ մանկութեան և երիտասարդութեան ատեն պատրաստեր է, փայտորդն կամաց կամաց կը կըրծէ բայց կը վնասէ կը տկարացընէ զկաղնին. կաթիլն ինկնելով քար կը փորէ։

Նմանօրինակ գէշ հետեւութեանց առջևն առնելու համար՝ հարկ է որդուց միտութեանց վրայ հսկել, իրեն, գնացից և ընկերաց վրայ՝ որք յաճախ նոցա կորստեան պատճառ են, ուշագիր ըլլալով մասնաւորապէս խօսածնուն, զի սովորաբար լիզունին նշանացոյց է իրենց հոգւոյն վիճակին, ինչպէս ստամֆոսինն է բժշկաց առջև։

ԱՌշափ թշուառական ծնողք իրենց սիրելի որդուց կորուսը պիտի չլային, եթէ կանխաւ գիտնային զանոնք զգուշացընել բարի խըրատներով և աւելի ևս բարի օրինակներով, անհաւատութեան վըտանգաւոր սկզբանց դէմ, և ամէն տեսակ որոգայթադիր հրապուրանաց՝ որք առաջին անգամ աշխարհ մտնելու ատեննին իրենց վրայց յարձակեցան։

Ամէն ջանք թափելու է ժողովրդեան որդուց սրտին մէջ սիրալիր և ազնուական զգացումներ չնշելու, ժամանակին իրենց կրթութեան հոգ տանելով, որ յետոյ պատուաւոր արհեստի մը գործադրութեամբ, կարենայ վայելուչ ապագայ մառջնին բանալ։

Թող լինի խնայութիւն ամէն բանի վրայ, բայց ոչ տղայոց սրտին և իմացականութեան վրայ։

Զգուշանակը ուրեմն, վասն զի մոլութեան ճանաշումն և սրտմաշուք սովորաբար ուշ կը հասնին, որ է ըսել՝ երբ այլ ևս դարմանելու ժամանակ չկայ։

Շարունակելի

